

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

«Ա՜Խ, ԻՆՉՊԵ՞Ս, Ո՞ՆՑ ՄՈՌԱՆԱԼ...»

Ողբամ մեռելոց,
Բեկանեմ շանթեր
Կոչեմ ապրողաց...

«Ես եկել էի, որ այստեղ լռեմ, ես եկել էի, որ չոքեմ ծունկի, քարանամ այստեղ առանց արցունքի...»,—թերևս վաղուց արդեն այս խոսքերը դադարել են հեղինակի սեփականն իսկ լինելուց, մեկ անգամ և ընդմիշտ գրանցվել համասփյուռ հայության հոգու մատյաններում, դարձել մորմոք ու կարոտ, վիշտ ու քարացած արտասուք: Արդեն քանի՜ տարի մարդկային սրտին անծանոթ մի զգացում ստվերի պես հետևում է հային, հետևում քուն թե արթմնի և, որպես անթեղված հավատամք, ամեն ապրիլի վերընձյուղվում է, վերափոխվում սուրբ հիշատակի ու խոնարհության օրվա, երախտիքի հավերժահոր տուրքի:

Ահա այդ վեհ գիտակցումով ապրիլի 8-ին Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջինը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ համատեղ, Ծիծեռնակաբերդի վեհ բարձունքում կրկին անգամ խոնարհվեցին սուրբ նահատակաց հոգիների հուրն առ երկինք տանող հավերժական կրակի բոց լեզուների շշուկ ու մորմոք դարձած լռության առջև:

Տերունական աղոթքից և հոգեհանգստի արարողությունից հետո սրտի խոսք է ասում Ամենայն Հայոց նորընտիր Վեհափառը, որի շնորհիվ ամեն մի ունկնդիր մեկ անգամ ևս մտովի վեր է բարձրացնում պատմության ևն ու թանձր վարագույրը, մինչև սուլթան Համիդ ու երիտթուրքեր, մինչև կենաց ու մահու դաժան մաքառում, մինչև Դեր-Զոր... Եվ հնչում է

Դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը

Հոգեհանգստյան աղոթք Մայր Աթոռում

հայոց մշտանորոգ ու «անլռելի զանգակատունը», հնչում զանգակների պարզ ու վճիտ ղողանջների պես, դառնում բյուր-բյուրավոր նահատակների անմեղ հոգիների փրկության կենդանի պատարագ, նաև ցասման ու վրեժի փոքրիկ մարտակոչ: Հնչում է... քանզի եղել է 1915-ը, կա Դեր-Զորը՝ հողեղեն և ջրեղեն գերեզմանոցն այն, որն ամփոփում է ավազի հետ խառնված, բայց դեռ «կենդանի» նշխարները հայի, և դեռ իր արնագույն ջրերի մասին է պատմում Եփրատը:

ԽՈՍՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԸ

Սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս և Որդիք Հայկազյան ցեղին, հարգարժան հոգևորական և աշխարհական պատգամավորներ Ազգային-Եկեղեցական Ժողովի, վստահ եմ այս պահը յուրաքանչյուրիս կյանքին մեջ պիտի արձանագրվի որպես յուրահատուկ նշանակություն ունեցող մի էջ: Ես կողջունեմ այն որոշումը անգամ մը ևս այստեղ Ազգային-Եկեղեցական Ժողովին, որով ուզեցին ժողովի ավարտին և գահակալության նախօրյակին գալ այստեղ, ծնրադրել նահատակաց հիշատակին առջև, հարգանք ընծայել անոնց անմեռ հիշատակին և ունկնդիր դառնալ անոնց անբարբառ պատգամին: Այսօր, եղբայրներ և քույրեր, եկած ենք ժամադրության մեր նահատակներուն հետ և եկած ենք, որովհետև նաև այս տարին ութսունամյակն է անմեռ հիշատակին:

Հայ ժողովրդին ներկա կյանքին մեջ ամենուրեք՝ ի Հայաստան, յԱրցախ և ի սփյուռս աշխարհի ութսունամյակը բարձրակետ թվական պիտի դառնա որպես միազանգումի տարի մեր ազգի և Եկեղեցվո միության և զորության, հավատարմության անոնց անժամանցելի իրավունքի ձայնին և որպես վերանորոգման տարի ամբողջ հայ ազգիս համար: Ես երախտապարտ եմ Աստուծո, որ այս ութսունամյակին տեղի կունենա իմ կաթողիկոսական ընտրությունը և գահակալությունը: Փառք քեզ, Աստված, որ այս մեծ պատվին արժանի ըրիր:

Եղբայրներ և քույրեր, ութսունամյակին առաջին օրերը ես Դեր-Զոր անցուցի: Յոթը հունվարի գացի Դեր-Զոր անապատը, գացի ձեռքերս անգամ մը ևս խառնեցի Դեր-Զորի անապատի ավազներուն մեջ և այս իմ դողդոջ ձեռքերուս դպան հողին տակեն դուրս եկող նոր աճյունները, մասունքները մեր նահատակներուն: Ձեք կարող երևակայել կյանքի այդ պահը, երբ խորը փորած ատենս այս ձեռքերուս դպավ գանգը հայ մանուկի մը և ոսկորներ անոր շուրջ: Եղբայրներ, այս էր իրականությունը ութսուն տարիներ առաջ: Եկած ենք այսօր ոչ թե իրենց հարգանքին համար, Աստված սիրեք, հարգած են և պիտի հարգեք, հավատամ: Եկած ենք իրենցմե ուժ առնելու, նահատակության ոգին մեր կյանքին խառնելու համար, եկած ենք զոհողության գերագույն դասը սորվելու համար: Եկած ենք խաչին երկրպագելու, խաչյալ Հիսուսին հետ մեր նահատակներու պատկերը այս խաչին վրա տեսնելու համար:

Եղբայրներ, քսաներորդ դարու այս վերջին տասնամյակին, ես կհավատամ, որ իբրև վերանորոգյալ ազգի զավակներ, այլևս սուգի, կոծի, ցավի, ինքզինքնիս միշտ ջարդված, հալածված ազգ ըլլալու պատկերեն դուրս պիտի բերենք: Միշտ խոսեցնաք, միշտ գրեցինք՝ ջարդեցին մեզի, հալածեցին մեզի, հողին հետ խառնեցին մեզի: Ահավասիկ, քան այլևս պիտի

փոխվի մեր հայացքը մահեն դեպի կյանք: Այս է նշանաբանը ութսունամյակին: Եվ ես կավարտեմ իմ խոսքը՝ ըսելու համար, որ մենք պիտի հավատարիմ մնանք այդ ոգիին և եթե երբեք քսաներորդ դարը սկսավ սև թվականով, անհավասիկ պիտի վերջանա պայծառ լույսով, Հայաստանի Պետության անկախության հռչակումովը և մեզ բոլորիս անոր շուրջը միասնական ոգիով իբրև Եկեղեցի և ժողովուրդ համախմբվելու գաղափարովը, վճռականությամբ: Այս թող ըլլա այսօր Ծիծեռնակաբերդի հուշարձանեն՝ անլռելի այս զանգակատունեն, մեր սրված դասը, որպեսզի նահատակները օրհնեն մեզ և երկինքեն, երբ նային այժմ Հայաստանի և ամբողջ Սփյուռքի բոլոր երկիրներեն հավաքված այս համախմբումին, պիտի ըսեն ու խորհին. «Մենք իզուր չմեռանք: Մեր մահը կյանք արժեցուցեց և այժմ շարունակեցեք այդ կյանքը իրրև վերածնյալ ազգ, պետություն»: Ամեն:

* * *

Հրաժեշտից առաջ ամենքն ասես մտովի առ Աստված են հղում իրենց աղոթք-խնդրանքը, որը, եթե թղթին հանձնելիս լինեին, գուցե հենց այսպիսին լիներ. «Ողջո՛ւյն քեզ, Աստվա՛ծ, Արարիչ երկնի և երկրի, կենաց Աղբյուր, գթության Հայր, արդար Դատավոր, Հայր Ամենակալ, հայացքդ գեթ այսօր արևի՛ր մեզ վրա, որպեսզի այն դառնա լո՛ւյս մեր մտքերում, հո՛ւյս՝ մեր սրտերում, հավա՛տք՝ մեր հոգիներում, սե՛ր՝ մեր կյանքում:

Մեր կյանքը կապեցինք Քեզ, ո՛վ Հիսուս Քրիստոս՝ Որդի Աստուծո, Վարդապետ Բարի, Հովիվ Քաջ: Մեր հողը ոռոգեցինք նահատակների, մարտիրոսների արյունով, մեր քարերը սրբատաշեցինք, որպեսզի նրանց վրա քանդակենք Ավետարանիդ սրբախոս բառերը, Արարատանման երկնահայաց գմբեթներով բազում եկեղեցիներ ու վանքեր կառուցեցինք: Ավետարանդ «Հայր» և Եկեղեցիդ «Մայր» կոչեցինք, հավատքդ մեր մաշկի գույնին խառնեցինք...: Հայցում ենք Քեզնից, ով Քաջ Հովիվ, արոտավայր Հայաստանդ ազատիր բռնագրավիչներից, որ լերկ խոպանը ծածկելու համար փուշ են սերմանում (եթե իհարկե սերմանել գիտեն):

Իմաստության, արիության հոգին ապրեցրու մեր նոր զավակների սրտերում, կենդանի նահատակության գիտակցությամբ ներգործիր նրանց մեջ Ապրիլյան նահատակների զոհաբերման շունչը, որպեսզի կարողանան հասնել մեր իղձ-երազին, պատմության ժառանգությանը, նահատակների կտակին, որը մեր ցեղի իրավունքն է, աստվածային արդարության ու աստվածապարգև ազատության տուրքը տառապակոծ, խաչապաշտ ու խաչչարչար ժողովրդիդ. Ամեն»:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վեհափառ Հայրապետը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի
եւ ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի հետ